ՆՈՐ-ԴԱՐ

№ 72 ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 30 Ապրիլի **1892** Հինգշաբթի, 30 Ապրիլի ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 72

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., համարը՝ 5 կոպէկ: Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9 ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների տողին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ:

ԱԶԴ

Խմբագրութիւնս խնդրում է նրանցից, որոնց վրայ այս կամ անցեալ տարիներից պարտք է մնում, բարեհաճեն շուտափոյթ ուղարկել: Ով որ չէ ուզում վճարել իր պարտքը, պէտք է իմանայ, որ թերթը ձրի չէ ուղարկւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Մի կարևոր շրջաբերական: Գանձակից: Բկացաւը Թիֆլիսում: Թիֆլիսի վարչական անձերի ուշադրութիւնը դէպի Մցխէթ: Բագուից: Մի ծրագիր: Գառնիբասարից: Գանձակից: Բագուից: Վագոնների համարագրութիւն: Գանձակից: Բագուից:
Թղթակցութիւններ.—Նուխի
Քաղաքական.—Քաղաքական լուրեր:
Խառն լուրեր:
Հեռագիրներ:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

ՔՐՈՆԻԿՈՆ

Մեզ հաղորդում են, որ Երևանի թեմական տեսուչ արժ. Մէլիքեանը այս օրերս մի շրջաբերական է ուղղել իր տեսչութեան տակ գտնուած ուսումնարանների հոգաբարձուներին, ուսուցիչներին և ուսուցչուհիներին, որով նրանց փորձառութիւնից ձեռք բերած գիտողութիւններն է խնդրում, թէ տնտեսական, թէ ուսումնական և թէ բարոյական մասերի նկատմամբ: Շրջաբերականից երևում է, որ արժանապատիւ հայրը մտադիր է Երևանի թեմի գաւառական գործը մի ընդարձակ տեղեկագրի մէջ ներկայացնել Նորընտիր Հայրապետին: Գործը ինքն ըստ ինքեան վերին աստիճանի հետաքրքիր և ուշադրութեան արժանի է. կմնայ մեզ ցանկալ, որ ձեռնհաս անձինք իրենց մտածած խորհուրդներով աւելի նպաստէին այս կարևոր խնդրին:

—

ԳԱՆՁԱԿԻՑ.—Տեղիս գլխաւոր բանտում տիֆ հիւանդութիւն է յայտնուել, որից մի քանի բանտարկեալներ վախճանեցան: Այժմս այս հիւանդութիւնը քիչ-քիչ պակասում է:

—

Բկացաւը Թիֆլիսում շարունակւում է զոհեր տանել երեխաներից: Պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ այդ հիւանդութեամբ ապրիլի 15-ից մինչև 23-ը զոհ են գնացել 7 հոգի, իսկ ուրիշ զանազան վարակիչ հիւանդութիւններից՝ 6 հոգի:

—

Այսօր, ապրիլի 30-ին Մցխէթ կայարանն են ուղևորւում Թիֆլիսի քաղաքագլուխը, քաղաքային խորհրդի անդամներն և Թիֆլիսի ոստիկանապետը:

—

ԲԱԳՈՒԻՑ.—Մայիսի 6-ին Բագուի Նիկոլայեան տօնավաճառը պաշտօնապէս կը բացուի. յոյս կայ, որ այս տարի անցեալ տարիներից աւելի աջողութիւն ունենայ: Ներկայումս Ռուսիայից, Պարսկաստանից, Բուխարայից բաւական թուով վաճառականներ են եկել և բերել են մեծ քանակութեամբ մանուֆակտուրային և ուրիշ բազմատեսակ գործարանային ապրանքներ:

—Օրէ ցօր առևտրական գործերն ընկնում են. նաւթական ճգնաժամը իր գագաթնակէտին է հասել. մանր գործարանատէրերն իրենց բոլոր կայքերը գրաւական են դրած և մանր պարտքերի տակ են խեղդւում: Նաւաստիներն և մշակներն գործարաններից և արդիւնարաններից արձակւում են, ամեն կերպ աշխատում են ռոճիկները քչացնել, բանւորների թիւը պակասեցնել. պարապ մարդկանց թիւը հազարներով կարելի է հաշուել:

—

Ռուսաց թերթերի ասելով, ծրագիր է կազմւում գիւղատնտեսական զանազան ճիւղերի մէջ առանձին եռանդ ցոյց տուող ժողովրդական ուսուցիչներին ինչպէս դրամական պարգևներ, նոյնպէս և առանձին չքանշաններ տալ:

—

ԳԱՌՆԻԲԱՍԱՐԻՑ.—Ապրիլի 14-ին Գառնիբասարի միրաբի ընտրութիւնը եղաւ Երևանի գաւառապետի օգնականի և III մասի պրիստաւի ներկայութեամբ: Գառնիբասարը բաղկացած է 44 հայ և մի քանի թուրք գիւղերից. ընտրութիւնը լինում է գիւղի հասարակական վճռով և իւրաքանչիւր 5 տնից ընտրուած մէկ վէքիլով, որը պէտք է մասնակցէ միրաբի ընտրութեանը: Ինչ-ինչ կեղծիքների պատճառով ահագին աղմուկ բարձրացաւ. մօտ չորս հազարի չափ հաւաքուած ժողովուրդը գժգոհ էր: Կարգը վերականգնելու համար կազակներ միջամտեցին: Եթէ դրանք չլինէին, մարդասպանութիւններ կարող էին պատահել:

—

ԲԱԳՈՒԻՑ.—Ահա չորրորդ օրն է, որ քաղաքիս վրայ սովորականից մեծ փայլուն աստղ է երևում ու մի քանի ժամից անհետանում. այդ աստղի լոյսը բաւական պայծառ է և հասարակ էլէկտրական լոյսի, բայց շատերի կարծիքն այն է, որ իբր թէ դա օդապարիկ է. մինչև անգամ պնդում են, որ Շամախու գաւառում երևացել է դարձեալ այդպիսի օդապարիկ էլէկտրական լոյսով և այդ երկնային ճանապարհորդները անգլիացիներ են, իջել են մի մալականի գիւղում, ուտելու պաշար են գնել և դարձեալ օդապարիկով բարձրացել. զանազան կարծիքներ և զանազան զրոյցներ են տալիս այդ դէպքի մասին: Ի հարկէ, այդ բոլորն անտեղի կարծիքներ և թիւրիմացութիւններ են. հեռադիտակով նայելուց և ուրիշ աստղերի հետ համեմատելուց յետոյ, երևում է, որ այդ մեծ լուսաւոր աստղի կազմակերպութիւնը միևնոյն է ինչպէս միւսներինը: Եթէ չենք սխալւում, այդ պիտի Վեներա աստղը լինի:

—

Մայիսի 1-ից Ռուսիայի բոլոր երկաթուղիների վրայ վագոնների համարագրութիւն է լինելու դրանց ընդհանուր թիւը որոշելու համար: Համարագրութիւնը լինելու է միաժամանակ բոլոր կայարաններում առաւօտեան ժամը վեցից մինչև ութը:

—

ԳԱՆՁԱԿԻՑ.—Պարսիկ խաների ժամանակներից մնացած այստեղ սովորութիւն կայ, որ երբ մի բան կորչում է, վարձում են մի համալ (պարսիկ մշակ), որը շրջելով փողոցները և բազարի մայդանը, բղաւում է՝ «այս ինչ մարդու այս ինչ բանը կորել է, ով է իմանում տեղը, թող յայտնի, այսքան վարձատրութիւն ունի…»

Նոյն իսկ այս կերպով յայտարարուեց Գանձակում և սոյն ապրիլի 22-ին Թիֆլիսում կատարած ընտրութիւնների մասին: Բազարնայա փողոցի թերթի խմբագրի «խամախոշները» իրենց հօտապետի թեմական պատգամաւոր ընտրուելու մասին, ջոկեցին իրենցից մէկին (համալի փոխարէն), որը մի ինչ որ հեռագիր ձեռքին պտտելով բազարի բոլոր խանութները, առանց բացառութեան, թուրքերէն էլ, աղաղակում էր «Արծրունին է ընտրուել»: Իսկ միւսները (մի յայտնի շրջան) խումբ-խումբ այստեղ այնտեղ հաւաքուած, հասկացնում էին ամբոխին, թէ որքան ուժով է իրենց խումբը:

Աղքատանոցի փողերը գտնւում են մի խումբ խամախոշների ձեռքում, որոնցից մէկը միւսի փեսան է, երկրորդը երրորդի խնամին և այլն… և սրանք ճաշում են առանձին, խորհում միատեղ, խմում առանձին, մտածում իրար հետ:

Այս չարագուշակ հարցը պտտւում է գանձակեցիների մէջ ամբողջ տարիներ, սրա մասին շատ անգամ է գրուել Թիֆլիսի լրագիրներում և նրա համար շատ անգամ են վէճեր և տարաձայնութիւններ պատահել ժողովրդի մէջ. բայց մեր յարգելի և «ազնիւ» «գանձապետ-խնամիները» իրենց խամախոշների հետ միշտ խուլ են տալիս հաշիւ ներկայացնելու…:

Շատ պարզ է ուրեմն, որ սրանք իրար մէջ ոչ մի անձնական շահեր չունին, միայն աղքատանոցի հաշիւն է էլ…: Եւ այս հաշիւը պահանջողներին էլ պատուելիքը «Ճանապարհ են ձգում» շատ ազնիւ միջոցներով և ի հարկէ առանց որ և է «հաշիւ-ցոյցերի» և… Ինչ և իցէ: Այսպիսի մի դէպք էլ տեղի ունեցաւ ապրիլի 19-ն, մի [illegible] հետ, որն իրեն [illegible] վերադարձնելու համար դիմել է բողոքով տեղիս հաշտարար դատաւորին:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են.—«Նոր-Դար»-ի 58 համարում, քրոնիկոնի բաժնում, տպուած էր որպէս թէ արժ. Եղիշէ քահանայ Գեղամեանցը ստիպուել է իր հրաժարականը տալ թեմիս առաջնորդ Միհրդատ արքեպիսկոպոսին, և սրբազան առաջնորդն էլ խոստացել է թոյլատրել, որ այս Զատկի տօնին տան օրհնէք կատարէ: Այդ սխալ է. տէր-Եղիշէն իր հրաժարականը չի տուել է առաջնորդին և առաջնորդն էլ երբեք չէ թոյլատրել նրան, որ տան օրհնէք ման գայ: Ինչ վերաբերում է այն լուրին թէ այստեղի քահանաների մէջ խռովութիւնը ծայրահեղութեան է հասել, այդ էլ սխալ է. քահանաները միմեանց մէջ հաշտ են. միմիայն մի քահանայ է, որ անհամաձայն է միւսների հետ և դրա պատճառը մեր բագուեցիներին յայտնի է:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՒԽԻ, 25 ապրիլի.—Երէկ Նուխու վիճակի յաջորդ արժ. Վ. վ. Տէր Գրիգորեանցն ուղևորուեց ս. Էջմիածին իր նոր պաշտօնն ստանձնելու: Մի խումբ համակրող ի պատիւ արժ. հօր հրաժեշտի ճաշ տուաւ, երէկ էլ ուղեկցեց մինչև առաջին կայարանը:

Ահա չորս և կէս տարի է, որ արժ. հայրը վարում է մեր վիճակի յաջորդութիւնը: Ինչպէս ինքն ասաց իր վերջին քարոզի ժամանակ, ծանօթ լինելով Նուխու վիճակի ժողովրդի բազմազան կարիքներին դեռ սրանից տասներեք տարի առաջ իր աշխարհական եղած ժամանակ, եկել էր մեծամեծ յոյսերով, սակայն ցաւելով յայտնեց, որ չնայելով իր բարի ցանկութիւններին, շատ բան՝ այնքան, որքան յոյս է ունեցել անելու, գործելու—չի աջողուել, բանի որ, հակառակ իր սպասածի, իր գործառնութիւնների ժամանակ ժողովուրդը կամ. աւելի ճիշտն ասած, ժողովրդի առաջնորդ համարուածները, ոչ միայն իր անհրաժեշտ մասնակցութիւնը չեն ցոյց տուել գործի յաջողութեան համար, այլ շատ դէպքերում եղել են [illegible], որոնք առաջնորդուելով ինչ ինչ անձնական շահերով, արգելք են եղել: Իր պաշտօնավարութեան կարճ ժամանակամիջոցում, չնայելով այդ խոչընդոտներին և արգելքներին, մանաւանդ այն անձերի կողմից, որոնցից սպասելի էր կենդանութիւն և քաջալերութիւն, արժ. հայրն աջողել է ընթացիկ գործերին ամենայն ուղղամտութեամբ ընթացք տալուց զատ, եթէ ոչ լրացնել հանելու, գոնէ սկիզբն դնելու մի քանի նշանաւոր գործերի: Տ. Վ. վարդ. առանձին հոգածութեան առարկաներն եղել են՝ բոլոր հոգևոր գործերի կանոնաւոր հաշուառութիւն, որի հետևանքն եղել է արդիւնքների զգալի կերպով աւելանալը, վիճակիս եկեղեցիների և նշանաւոր ուխտատեղիների պայծառութիւնը և արդիւնքների կանոնաւոր ստացումը, քահանայացուներ պատրաստելու խնդիրը, վիճակիս կրթական գործը, ուսումնարանների և յատկապէս քաղաքիս երկսեռ դպրոցների արդիւնքների աւելացնելը, անցեալներում գործուած զանազան զեղծումների, կերած ու կորած փողերի, խճճուած հաշիւների բաց անելը, քաղաքիս արգայոց դպրոցի շինութեան խնդիրը, որի հիմքն այս մօտ ժամանակներս պիտի դրուէր, եթէ այդպէս անակնկալ, մինչև անգամ հակառակ իր ցանկութեան, ս. Էջմիածին չկանչուէր: Չմոռանանք յիշել, որ Բար. ընկ. ճիւղը տեղս բացուեց արժ. հօր նախաձեռնութեամբ և ջանքով: Համառօտակի ցուցադրելով այս բոլորը, մենք ուզեցինք ցոյց տալ, թէ ինչ գործեր ունի կատարելու մեր ապագայ յաջորդը: Մենք հաւատացած ենք, որ վերջինս, ով որ էլ լինի, կը շարունակէ իր նախորդի սկսածները:

Իբրև մի անձն, որ ի մօտոյ քաջ գիտակ է մեր եկեղեցու ներքին կարիքներին, մենք վստահ ենք, որ կաթող. ընտրութեան գործում կը գործէ իր համոզմունքով, չենթարկուելով ուրիշների ազդեցութիւններին: Դեռ ևս իր աշխարհական եղած ժամանակ արժ. Վ. վ. Տէր Գրիգորեանը ճանաչուած է իբրև հեռատես, անկաշառ և ինքնուրոյն անձնաւորութիւն:

Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Զագրեբում, Աւստրիայում, տեղապահ զօրքի մէջ խուզարկութիւն անելով նամակներ են գտել, որոնցից երևում է, որ զինուորները յարաբերութիւն են ունեցել անիշխանականների հետ: Ձերբակալուած են մի քանի ենթասպաներ և հասարակ զինուորներ, նոյնպէս և մի ֆելդֆեբել: Այդ բացայայտութիւնը մեծ իրարանցում է ձգել աւստրիական զինուորական շրջաններում:

—Անիշխանականներն իրենց սպառնական նամակներով համարեա ամեն օր շարունակում են հեղեղել Պարիզը: Այդպիսի մի նամակ ստացել է մինչև անգամ հասարակապետութեան նախագահ Կարնոն, այդ պատճառով Ելիսեան պալատի առաջ պահապանների թիւն աւելացրած է:

—Չնայելով հերքումներին, այնուամենայնիւ Բեռլինի «National Zeitung» լրագիրը պնդում է, որ գերմանական զինուորական մինիստր Կալտենբորն-Շտախաուն հրաժարական է տալու:

—Մադրիդից հեռագրում են, որ սպանիական կառավարութիւնը 15,000 պահեստի զինուոր է զէնքի կոչել: Շատ բնակիչներ շուտափոյթ կերպով թողնում են Բարսելոնն և Կադիքսն ապստամբութիւնից երկիւղ կրելով:

—Հեռագիրը մեզ հաղորդեց, որ դահոմէյցիները Փրանսիացի կոյսեր էին գերի առել: Այժմ Փրանսիական թերթեր հաղորդում են, որ նրանք ազատ են թողել կոյսերին, բայց խստիւ հսկում են Վիդախում ապրող երկու և Աբոմէյում (Դահոմէյի մայրաքաղաքում) գտնուող վեց Փրանսիացիներին:

—Սենտ-Ջէմս-Հոլլում (Անգլիա) մի ժողով էր գումարուած կանանց ընտրողական իրաւունք տալու խնդրի օգտին: Ժողովը խիստ աղմկալի էր և վերջացաւ նրանով, որ ժողովրդականներն սկսեցին իրար թակել. կանայք երկիւղից փախան: Ժողովը վերջանալուց յետոյ ամեն ոք գնաց իր վէրքերը փաթաթելու:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզից հեռագրում են, որ այնտեղ հակա-անիշխանական դաշնակցութիւն է կազմւում:

—

Պարիզում առաջիկայ մայիսի 13-ին, 14-ին և 15-ին կանանց կոնգրես է կայանալու, որտեղ Եւրոպայի և Ամերիկայի զանազան պետութիւններ իրենց կին-ներկայացուցիչները կունենան:

—

Պարիզում գրողների ընկերութեան շինութեան մէջ անձնասպանութիւն է գործել Լա-Մէյլ վիպասանը: Նրա գրպանում գտնուած նամակի մէջ իր անձնասպանութեան պատճառը բացատրում է նրանով, որ զգում է եղել, թէ ինչպէս իր մտաւոր կարողութիւնը թուլանում է։ Միւնոյն պատճառով մի օր առաջ անձնասպանութիւն է գործել Սերում Փրանսիացի ճանապարհորդ Դիւվիէրէն։

—

Վիեննայի յայտնի բժիշկ Բիլրոտը մի անգամ մի հեռագիր ստացաւ, որով նրան անմիջապէս Կրակով էին հրաւիրում մի ինչ-որ Մովսէս Աբրահամսոնի մօտ, որ այնտեղի բանկիրների թագաւոր էր համարւում։ Բիլրոտը, որ եթէ գնալու լինէր, պէտք է թողնէր իւր նշանաւոր պարապմունքները, պատասխանեց, որ 2,000 ֆլորինից պակաս չի համաձայնիլ Կրակով գնալ։ Մովսէսը կրկին հեռագրեց նրան, որ նրա պահանջը չափից դուրս մեծ է։ «Նա մի կոպէկ անգամ չիմ զիջիլ», պատասխանեց բանկիրին բժիշկը։ Բանկիրը վերջապէս համաձայնեց 2,000 ֆլորին տալ և Բիլրոտը ճանապարհ ընկաւ դէպի Կրակով։ Կրակովի կայարանում նրան ներկայանում է հրէաներից մի պատգամաւորութիւն, որ արտասուքն աչքերին յայտնում է նրան, թէ Մովսէս Աբրահամսոնը հոգին աւանդել է։ Ցաւ յայտնելով խեղճ Մովսէսի համար, Բիլրոտը կամեցաւ վերադառնալ Վիեննա, բայց որովհետև գնացքը հեռանում էր միայն հետևեալ առաւօտեան, ուստի նա իջաւ հիւրանոցում։ Այն ինչ քաղաքում լուր տարածուեց նրա գալու մասին և հիւանդները հեղեղեցին հիւրանոցը։ Բիլրոտը նրանց օգնելու և աղքատ դրութիւնը տեսնելով, ամենքին ձրի էր ընդունում ամբողջ գիշերուայ ընթացքում։ Միւս օրն առաւօտեան երկաթուղու կայարանում նրան մօտեցաւ մի հրեայ և նրա ականջին փսփսալով շշնջաց. «Ներողութիւն, պ. բժիշկ, նախ քան դուք կը հեռանաք մեր քաղաքից, ես կարևոր եմ համարում ձեզ յայտնել, որ Մովսէս Աբրահամսոնն իսկի միտք էլ չունի մեռնելու. ընդհակառակը, նա այժմ աւելի առողջ է։ Երէկ նա այն հիւանդների մէջ էր, որ ձրի ընդունում էիք դուք։ Նա խնդրել է ինձ, որ իւր կողմից ձեզ շնորհակալութիւն յայտնեմ»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 ապրիլ.—Քաղաքապետ Գրեսերի առողջութիւնն առաջուայ պէս վտանգաւոր է։

«Новости»-ն հաղորդում է, որ երէկ պաշտօնապէս յայտագիր է ներկայացրած մի խումբ ռուս դրամատէրների կողմից, որոնք ընկերութիւն են կազմում շինելու և շահագործելու Սիբիրի երկաթուղին Չելեաբինսկից մինչև Սրետենսկ։

Կ. ՊՈԼԻՍ.—Վուլկովիչի սպանման գործի մասին դատարանը վճիռ կայացրեց. Մերջեանիս Խրիստոն մահուան պատժի է դատապարտուած, իսկ Թուֆեքչիև երկու եղբայրները դատապարտուած են տաժանակիր աշխատանքների իւրաքանչիւր 15 տարի։

ԲՐԻՒՍԷԼ.—Մի քանի քաղաքական գործիչներ և դատական վարչութեան անդամներ սպառնական նամակներ են ստացել։ Անիշխանականներից մէկը իրեն յանցաւոր է ճանաչել Լիեժում խորհրդատու Ռեմսոնի տունն ուժանակով օդ ցնդելու մասնակցութիւն ունենալուն համար։ Այժմ ձերբակալուած անիշխանականների պատասխանատուութեան ատեանը կատարելապէս որոշուած է։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

28 ապրիլ.

Լոնդոն 95,10. 94,70 9510
Բեռլին 46,55, 46 1/2, 46,55
Պարիզ 37,65
Պոլուիմպերիալ 7 ր. 55 կ. գն 7 ր. 58 կ. ծ.
Մաքս. կուպոն 150 1/4, ծախ 151 1/4 ր. ծախ.
Արծաթ . . . . 1, ր. 12 կ. ծախ.
Բորսայէն դուրս . . 4 ր. մինչև 4 1/2 % ծախ
Պետական բանկի 5% տոմս.
1-ին շրջանի . . . . 102 3/4 ր. կ. առն.
2-րդ . . . . 102 ր. 62 կ. առն.
3-րդ . . . . 102 1/4 ր. 87 կ. գն.
100 և 1000ր. արժեկան փոխառութեան 5% տոմսեր.
1-ին շրջանի . . . .
2-րդ . . . . 102, ր. 12 կ. առն.
3-րդ . . . . 103, ր. — կ. գն.
Ներքին 5% շահեկան փոխառութեան.
տոմսեր . . . . 236 ր. — կ. առն.
. . . . 2-րդ 218 1/2 ր. — կ. առն.
Նորագ. փոխ. Ազն. Հող.
բանկի . . . . 198 1/4 ր. — առն.
5% գրաւական . . . . 104 1/4 ր. 87 կ. գն.
Թիֆ. բաց. փոխ. բանկի.
ակցիա . . . . կ. առն.

Բորսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Պոստային կառքերի երթևեկութիւն . ռազմա-վրական տրակտի վրայ։

—

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առ. ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում, Վլադիկավկազ հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7 1/2-ին։

Ութ հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Վլադիկավկազից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առ. ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում, Թիֆլիս է հասնում հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7 1/2-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Անդրկովկասեան երկաթուղի

—

Թիֆլիսից Բաթ. գն. պոստ. 6 ժ. 50 ր. երեկ.
» » առ. մարդ.—9 ժ. 30 ր. առ.
Բաթումից Թիֆ. հաս. պ 9 ժ. 52 ր. եր.
» առ.-մարդ.—12 ժ. 25 ր. ցեր.
Թիֆլիսից Բաքու գն. 1 ժ. 20 ր. ցեր.
Բաքուից Թիֆլիս հաս. 5 ժ. 50 ր. եր.
Թիֆլիսից Գանձ. գն. 9 ժ. 20 ր. եր.
Գանձակից Թիֆլիս հաս. 7 ժ. 30 ր. առ.

Ռուսաց շոգենաւային ընկերութիւն։
Երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև։

Բաթումից դուրս է գնում.

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Նովոռոսիսկի վրայով։

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 2-ին շրջանաւոր ընթացքով Փոթիի վրայով բոլոր նաւահանգիստները։

Երկուշաբթի օրերը, երեկոյեան ժամը 7-ին Կ. Պոլիս։

Բաթում հասնում է.

Երկուշաբթի օրերը, երեկոյեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով։ Ուրբաթ օրերը, առաւօտեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով Կերչի և Նովոռոսիսկի վրայով։

Կիրակի օրերը, առաւօտեան, Կ. Պոլսից։

—

Պոստային և ապրանքային-մարդատար շոգենաւերի երթևեկութիւն Փոթիի, Բաթումի և Օդեսայի միջև։

Փոթի հասնում է.

Պոստային մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին։

Ապրանքային - մարդատար շոգենաւը Օդեսայից կիրակի օրերը երեկոյեան։

Ապրանքային - մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին։

Փոթիից դուրս է գնում.

Պոստային-մարդատար շոգենաւը Օդեսա և Ճանապարհին գանուած նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին։

Պոստային-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթում։

Ապրանքային - մարդատար շոգենաւը Բաթում երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին։

Ապրանքային - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օդեսա և Ճանապարհին գանուած նաւահանգիստները։

—

Ապրանքային մարդատար գիծ.

Բաթումից դուրս է գնում հինգշաբթի օրերը գիշերուայ ժամը 1-ին։

Բաթում հասնում է երեքշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 2-ին։

Ապրանքային մարդատար շոգենաւերի վրայ ընդունւում են II և III կարգի ուղևորներ և առանց ուտեստի պաշարեղէնի։

Գործակալութիւնը գանւում է Թիֆլիսի ազ. բանկի շինութեան մէջ №№ 117 և 118։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իսկական գործար. միայն այս դրոշմանիշով է։

Huste-Nicht
Gerichtl. geschützt

„ՄԻ ՀԱԶԻՐ"

Ամեն առաւելէն մալց-էքստրակտ և շաքարեղէն

Լ. Գ. ՊԻՏՇ ԵՒ ԸՆԿ. ԲՐԵՍԼԱՒԼՈՒՄ։

Քիմիական վերլուծութեամբ և բժշկական փորձերով հաստատուած է, որ յամենայն դէպս դրանց մէջ առողջութեան վնասակար ոչ մի նիւթ չէ մտնում, ասոր վրայ ներմուծումն և վաճառումը Ռուսիայում թոյլ է տրուած։

Գինը՝ շիշը 1 ռուբ. և 2 ռուբ. 40 կոպ., Տուփերիկները 30 և 50-ական կոպ.։

Փաթաթելու և ուղարկելու համար առանձին են վճարում։

Գլխաւոր պահեստը Ռուսիայի համար

Վ. ՍԱԻԻԽԻ մօտ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ Կոլոկոլնայա 18/19

Վաճառւում է Ռուսիայի բոլոր դեղատնային խանութներում և դեղատներում։

(M.) 16 - 14

КАКАО
БЕЗЪ МАСЛА
ВЫСШАГО КАЧЕСТВА
МИНУТНОЕ
ПРИГОТОВЛЕНІЕ
ФАБРИКИ
С. СІУ и К°

(M.) 24—4

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ!!!

"ՎԻԿՏՈՐ ՌԵԳԻՆԻ,,

պարֆիւմերային գործարանի պահեստում

Է. ԲՈԴԼՕ ԵՒ ԸՆԿ
Մոսկուայում
ՕՃԱՌ ՕԼԷՕ-ՎԱԶԵԼԻՆ
ՌՕՅԵԱԼ-ԿՈՆԳՕ!!!

Վաճառւում է ամբողջ Ռուսիայի բոլոր դեղատներում։

(250 շ.) 20—10

ՊԱՏՐԱՍՏ Է ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ
ՀԱՅՈՑ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

(Վերլուծութեամբ գասական ակնառու փաստերի) գործ Նուշութեմ. դպ.՝ մատենագրութեան ուսուցիչ Յ. ԽԱԴԱՐԲԵԿԵԱՆՑԻ։
Բաժանորդագինն է 60 կոպ.
Դիմել Նուշի հեղինակին։

10 - 5.

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի խմբագրութեան մէջ

Վաճառւում է

ԳԱԼՈՒՍՏ ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑԻ

ՆԻՒԹԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Վերնագրով գիրքը, որ պարունակում է իւր մէջ Պարսկաստանի ԵՐԵՒԵԼԻ ՀԱՅԿԱԶՈՒՆՆԵՐԻ կենսագրութիւնն ընդ նմին բազմազան և բազմաթիւ տեղեկութիւններ՝ Պարսկաստանի Հայոց անցեր պատմութեան վերաբերեալ, այլ և պարսկական արքունեաց և պալատան ներքին և արտաքին արարողութիւններն ու կենցաղավարութիւնների նկարագիրը և նրա ներքին գաւառների և ցեղերի մասին կարևոր ծանօթութիւններ։

Այս մեծագին աշխատութիւնը, որ արժանացել է [illegible] առաջին մրցանակին և բաղկացած է 400 մանրատառ տպագրած երեսներից վաճառւում է այժմ 3 րուբլով, թէպէտ հեղինակի կենդանութեան ժամանակ նշանակուած էր գինը 5 րուբլի։

X—14.

Արդուգարդի ՕՃԱՌԻ և ՀՈՏԱՒԷՏ ապրանքների

ՍԵՊՀԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ՌԻՉԱՐԴ ՎԻԼԴՏԻ Վարշաւում. արդոյ հասարակութեան առաջարկում է վարդենու օճառ, [illegible] օճառ, [illegible] օճառ՝ 12 տեսակ հոտով, [illegible], Տրիպլ, [illegible]։

ԹԱՓԱՆՑԻԿ ՕՃԱՌՆԵՐ

Բժշկական օճառներ, գլիցերինի օճառ, գունաւոր օճառ, օ-դը-կոլոն Տրիպլ և ատամի էլէքսիր։

Վաճառւում է գաւառներում՝ շատ դեղատներում և վարսավիրների մօտ։

(260 շ.) 30—18.

ԳՐՈՂ ՄԵՔԵՆԱՅ

ՌԵՄԻՆԳՏՕՆԻ № 5

Ամենանոր բոլոր եղած սիստեմի գրող մեքենաներից. ճանաչուած է ամենալաւն աշխարհիս երեսին։ ՀԱԶԱՐԱՒՈՐՆԵՐՈՎ են գործ ածւում բոլոր մինիստրութիւնների և հասարակական ուրիշ հաստատութիւնների մէջ։

Ցուցակներն և կառավարութեան յայտնած կարծիքը ձրի։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ Փ. ԲԼՈԿ

Պետերբուրգ, Օդեսա, Մոսկուա, Վարշաւա.

(184. տ.) 17—2.

ԿՈՇԿՈՒՃ ԴԵՂ

Ա. ՑԻԳԼԵՐ.

1/2 կտորը 30 կ.
1 կտորը 50 կ.

կարելի է ստանալ բոլոր ամենայն դեղատներում, դեղատնային և պարֆիւմերային խանութներում

(100 տ.) 20—4.

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ

ՋԵՄՍ Է ԲԵԼԼ

Մոսկուայում, Պետրովկա, տ. Պենսկու։

Ներկայացուցիչ

ՌԱՆՍՕՄ, ՍԻՄՍ և ՋԵՖԵՐՆՍ

Պրէյս-կուրանտն և ցուցակն ուղարկւում է ձրի։

(277 շ.) 12 - 9.

Յարմար է պարերի համար կատարելագործուած

ՀԵՐԱՓՕՆ
10 պիեսով
30 ՐՈՒԲ.

ԲԻՍՏՈՆ-ՕՐԳԱՆ
10 պիեսով 24 ՐՈՒԲ.
Կան մեծ քանակութեամբ պիեսներ 50 ական կոպ.

ՖԵՆԻՔՍ-ՕՐԳԱՆ
մետալական 10 պիեսով
32 ՐՈՒԲ.
աւելորդ պիեսները 60-ական կոպ.

ՍԻՐԱՖԻՆ, նոր օրգան երեխաների համար 6 պիեսով 5 ՐՈՒԲ.
6 ից աւելորդ պիեսները 50-ական կոպ.

ՆՈՐՈՒԹԻՒՆ
Մ. ՆԵԿԵՆ և ԲԻՍՏՈՆ 6 պիեսով 8 ր. 6-ից աւելի պիեսները 25-ական կ.

Կան մեծ քանակութեամբ նոր հրաշալի մեխանիքական և ուրիշ երաժշտական գործիքներ և պարագաներ։

ՅՈՒԼԻՈՍ ՀԵՆՐԻԽ ՑԻՄՄԵՐՄԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՒ ԶԱՅՆԱԳՐԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՊՕ.

ՄՈՍԿՈՒԱ, Կուզնեցկի կամուրջ, տուն Զախարինի.
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Բ. Մորսկայա, № 34 և 40.

Պատկերազարդ պրէյս-կուրանտն և [illegible] ցուցակը — ձրի։

20 —2

Дозволено цензурою, Тифлисъ 29 го Апрѣля 1892 г.   Տպարան «Կաւկազ»   Типографія «Кавказъ» Гол. пр., докъ Читахова